Արձանագրություն N 2
ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23.05.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Տ. Ղուկասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտի բացման մասին

(Հ.Բաղինյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով 2019 թվականի մայիսի 23-ին ժամը 11:30-ին:

բ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	ՀՎՀՀ
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	01548908

գ) մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Մասնակցի անվանումը	Չափա-բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Նախահաշվային արժեքը	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	2	3		4	5	6
<<Սմարթլայն>> ՍՊԸ	1	Թղթապանակ	17100	12750	2550	15300

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

2. Տեղեկություններ ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասին

(Հ.Բաղինյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը և մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

Չափաբաժին 1 Թուղթ, A 4 ֆորմատի		
Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Սմարթլայն>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Հ.Բաղինյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

- Ծանուցել <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերով պահանջվող փաստաթղթերի: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Հ.Բաղինյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Բաղինյան

Անդամ՝ ---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

---------- Տ. Ղուկասյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան